ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«14» հունվարի 2025թ. Ն ՄՈ/137-Ա

ք. Արմավիր

ՆԱՐԵԿ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՕԳՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 91-րդ հոդվածով, 92-րդ հոդվածի 2-րդ մասով, 94-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ և 6-րդ մասերով, 9-րդ հոդվածի 10-րդ մասով, հիմք ընդունելով Նարեկ Խաչատրյանի 2025 թվականի հունվարի 14-ի դիմումը.

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի օգնականի պաշտոնը զբաղեցնելու համար Նարեկ Խաչատրյանի հետ 2025 թվականի հունվարի 14-ից կնքել անորոշ ժամկետով աշխատանքային պայմանագիր՝ մեկ ամիս փորձաշրջանով, համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

2025-01-14 18:57:32 GMT+4
Հավաստված է E-HSM-ի կողմից
eID

Հավելված
ՀՀ Արմավիրի մարզպետի
2025 թվականի հունվարի 14-ի
N ՄՈ/ 137 -Ա որոշման

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Արմավիր համայնք 14 հունվարի 2025թ.

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմը, մի - կողմից, ի դեմս Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Արգիշտի Մեխակի Մեխակյանի (այսուհետ՝ Գործատու), և Նարեկ Ալեքսանի Խաչատրյանը (ծնված 1993 թվականի հունվարի 18-ին, բնակության վայրը՝ Արմավիրի մարզ, գ. Ջրառատ , Հոկտեմբերյան 88 տուն, անձնագիր՝ AT 0565230, տրված 057 կողմից 2020թ. սեպտեմբերի 17-ին), մյուս կողմից (այսուհետ՝ Աշխատող) կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1. Գործատուն հանձնարարում է, իսկ Աշխատողն ապահովում է Գործատուի հանձնարարությունների ճշգրիտ և ժամանակին կատարումը:
2. Աշխատողի հետ աշխատանքային պայմանագիր է կնքվում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի օգնականի պաշտոնն զբաղեցնելու համար:
3. Աշխատողի աշխատանքային գործառույթներն են՝ ապահովում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի հանձնարարականների կատարումը:

2.ԱՇԽԱՏՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝

4. Աշխատողն ունի Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով և այլ իրավական ակտերով սահմանված իրավունքներ և պարտականություններ:
5. Աշխատողն իրավունք ունի՝
1) ծանոթանալ իր աշխատանքային իրավունքները և պարտականությունները սահմանող իրավական ակտերին.
2) ծանոթանալ իր անձնական գործի բոլոր նյութերին, իր գործունեության գնահատականներին և անհրաժեշտության դեպքում բացատրություններ ներկայացնել.
3) սահմանված կարգով ստանալ իր պարտականությունների կատարման համար անհրաժեշտ տեղեկություններ, նյութեր և սարքավորումներ.
4) վարձատրության, առողջության պաշտպանության, անվտանգ աշխատանքային պայմանների ապահովվածության, ամենամյա վճարովի և չվճարվող արձակուրդի.
5) իրավական, սոցիալական պաշտպանության և ապահովության:
6. Աշխատողը պարտավոր է՝
1) ժամանակին և պատշաճ կատարել իր աշխատանքային պարտականությունները.
2) պահպանել կազմակերպության ներքին կարգապահական կանոնները.
3) պահպանել աշխատանքի պաշտպանության և անվտանգության ապահովման պահանջները.
4) բարեխղճորեն վերաբերվել Գործատուի և այլ աշխատողների գույքին:

3. ԳՈՐԾԱՏՈՒԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7. Գործատուն իրավունք ունի՝
1) ցանկացած ժամանակ ստուգել Աշխատողի կողմից իրականացվող աշխատանքի ընթացքը և որակը.
2) լուծել աշխատանքային պայմանագիրը օրենքով սահմանված դեպքերում և կարգով:
8. Գործատուն պարտավոր է՝

1) Աշխատողին ապահովել պայմանագրով պայմանավորված աշխատանքով և կազմակերպել նրա աշխատանքը.
2) նախատեսված ժամկետում և սահմանված չափով վճարել Աշխատողի աշխատավարձը.
3) Աշխատողին տրամադրել օրենքով սահմանված հանգստի ժամանակի տեսակները.
4) ապահովել անվտանգ աշխատանքային պայմաններ.
5) աշխատանքի ընդունելու ժամանակ Աշխատողին ծանոթացնել կազմակերպության ներքին կարգապահական կանոններին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

9. Գործատուն Աշխատողին վճարում է ամենամսյա աշխատավարձ՝ 374400 (երեք հարյուր յոթանասունչորս հազար չորս հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամի չափով կամ համաձայն հաստիքացուցակի:
10. Սույն պայմանագրով սահմանված աշխատավարձի չափը կարող է փոփոխվել՝ կապված սահմանված դրույքաչափի փոփոխման հետ: Փոփոխությունը կատարվում է գրավոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհամարվի սույն պայմանագրի անբաժանելի մասը:

5. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

11. Նախատեսված պաշտոնին Աշխատողի համապատասխանությունը ստուգելու նպատակով սահմանել փորձաշրջան՝ մեկ ամիս ժամկետով:
12. Եթե Աշխատողի հետ փորձաշրջանի ավարտից հետո շարունակում են աշխատանքային հարաբերությունները, ապա նա համարվում է փորձաշրջանն անցած:
13. Սույն պայմանագրով նախատեսված պարտականությունների չկատարման դեպքում կողմերը կրում են պատասխանատվություն օրենքով սահմանված կարգով:
14. Սույն պայմանագիրը լուծվում է Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված հիմքերով և կարգով:
15. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է անորոշ ժամկետով:
16. Սույն պայմանագիրը կնքվել է երկու հավասարազոր օրինակից, որից մեկ օրինակը տրվում է Աշխատողին, իսկ մյուսը պահվում է Գործատուի մոտ գտնվող Աշխատողի անձնական գործում:

Գործատու Ա" Մեխակյան	Աշխատող Ն" Խաչատրյան
(ստորագրություն)	(ստորագրություն)

Կ.Տ.